



Պատասխանատու  
Յովհաննէս Փիլիսեան

## ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԵՒՈՅ

Նամակըն ուղղելի են  
առ. Ղ. Գ. Պալլազարեան

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՌՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԶՄԻՌՆԵՒՈՅ ՇԱՐԱԹ 20 ՅՈՒՆԻՍԻԱՐ 1879 ԹԻԻ 4410

#### ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռուսիոյ և Բ. Գրան մէջ կնքուելիք մասնաւոր պայմանագրութիւնը, որոյ համար բաժնէինք թէ մինչ ի 6 Յունուարի պէտք է կնքուած լինի, դեռ մինչև ցայսօր կ'երկարածդի, և ասոր պատճառ կուտան Օսմանցի գերեաց համար Ռուսիոյ բրած ծախուց վերաբերեալ մի քանի դժուարութիւնները, և Բ. Գրան կը պահի, հոն պատճառներ իրար կը յաջորդեն: Բ. Գրան, որ յօժարամիտ է զհողութիւններ բնելոյ, սոյն պատճառն ալ վերջնելոյ լինի, հարկաւ ուրիշ մի պիտի ծագի. այսու ամենայնիւ չեմք ասեր, թէ Զարին կառավարութիւնը Յունիս 13ի դաշնագրութեան դէմ արացել կը ջանայ. բնդհակառակը յօժարամիտ է կատարել ամեն պայմանները: Պատրաստ է նաև զԱզրիանուպոլիսը պարպել. սակայն խիստ յանձնապատասխան կը համարի խմբագիր մի եթէ ըլլալիք կարգադրութեանց և պայմանաց գործադրութեան ժամն օր որոշելոյ լինի, կ'ընեն իրենց ստոյգ կործնած աղբիւրներու. գիտցած լինի որ այսօրուայ գրածը, վաղը պէտք է ետ առնու: Այսպէս Աֆղանիստանի խնդիրը, որ Լոնտոնի լրոց նայելով՝ կատարուած գործ մի է, այսու ամենայնիւ դեռ խնդիրն չէ լուծուած: Աֆղանաց կողմէ մանր մունր պատահմունքներ և կ'ընեն պակաս չին: Եւրոպայ խան դեռ հաշտութեան պայման կնքած է:

Նոր խնդիր մի ևս կոյ տերութեանց մէջ, այն է Արևելեան Ռումելիոյ ուստական զօրքը մեկնելէն յետոյ միջազգային զօրացմէ բաղկացեալ խառն բանակ մի դնել հոն: Բ. Գրան զայս չընդունիր. այսու ամենայնիւ յանձնաժողովը երկրին խաղաղութեան համար կարևոր կը համարի խառն բանակը, գոնէ առայժմ: Ամսոյս 16ին հասած հեռագիր մի կը ծանուցանէ

թէ այդ խառն դրաման խնդիրը մէկդի թող տրուեցաւ:

Հելլենական խնդրոյն կարգադրութեան համար Մուխթար փաշայ պատուիրակներ զրկեց Յոյն յանձնաժողովոյն որ դան ժողովին կամ ի Բրէվելա և կամ ի Վոնիցա: Ապետոյն—Պէյլի որ Բ. Գրան կողմէ անդամ ընտրուած էր սոյն ժողովոյն, հրաժարուելով, նորա տեղ կոստանդ փաշայ կարգուած է:

#### ԱԶԳԱՅԻՆ

Հանդես նաւակատեաց եւ բացման  
նորակառոյց հիւանդանոցի Հայոց Զմիւռնիոյ:

Յունուարի 14 օրը մեծ և նուիրական օր մի էր Զմիւռնիոյ Հայ հասարակութեան համար, և քիչ ժամանակէն պատմական օր մի պիտի լինի ազգային տարեգրութեան մէջ: Վերջին թուով խօսեցած էինք Վսեմաշուք Սպարթալեան երկուց ազգասէր պայազատ եղբարց առատածեռն ծախիւք նորակառոյց հիւանդանոցի վերնորդեալ եկեղեցւոյ սրբադործութեան առթիւ կատարուած հոգեւոր հանգեսը, իսկ այս անգամ յաւուր կիւրակէի Նաւակատեաց և բացման հանգեսը կատարուեցաւ ի ներկայութեան բազմաթիւ ազգայնոց իւր հինգ հազարաց և ոմանց օտարազգեաց որոնք յատկապէս հրաւիրուած էին: Զինի հանդիսաւոր Ս. Պատարագի խորհրդոյ, որ կատարեցաւ ի ձեռն գեր. Առաջնորդին, եկեղեցականք հանդերձ թափօրիւ ելան բուն հիւանդարանի վերի յարկի ընդարձակ սրահը հանդերձ խուռն ժողովրդով, ուր կարգացուեցաւ նախ ճառ մի ի գիմաց վսեմ Սպարթալեան եղբարց, որով կը յանձնէին ի ձեռն ազգին իրենց ձեռակերտ ազգային նորակառոյց հիւանդանոցը: Յիշեալ ճառը, զոր

քիչ մի վարը պիտի տեսնեմք, գեղեցիկ կընկարագրէ վսեմ եղբարց կրօնական այն զգացումը, ուխտն և իղձը, որով ներշնչուած էին և գրեթէ երկնաւոր ձայնէ մի առաջնորդուած՝ մարդկութեան անկեալ և թշուառ մասին երջանկութեան յարկը կանգնելոյ և Նախախնամութեան գործիք լինելոյ աշխարհիս վերայ: Սոյն երկնային ձայնը աւելի զօրացած է իրենց հոգւոյ մէջ, մի կողմէ բազմ քաւելի զուարթ ժպիտներ արծակելով իրենց՝ նիւթաւորապէս նպաստելով և թէ միւս կողմէ քաջալերական յորդորներէ բարոյապէս խրախուսուելով: Նշանաւոր է յիշեալ ճառին վերջարանը, ուր կ'ըսէ. «Գեր. Ս. Հայր, առէք, կ'առնուք ենք ձեզ սոյն նորաշէն հաստատութեան բանալիներն և ձեզմով համընէն Ազգիս. և ուրիշ փառասիրութիւն մի չունինք, այլ միայն տեսնել հեռուէն սոյն հաստատութեան պայծառութիւնն ու հրճուիլ. լսել թուեալ տառապելոց օրհններն ու միտթարուիլ. տեսնել ազգային տան ուրիշ կարեւոր պիտոյքը հոգալու հետամուտ բարեբարներ և զԱստուած փառաբանել: Այս է մեր իղձը, մեր ուխտն ու կտակը, որոյ գործադրութիւնը կը յանձնեմք ամենայն վստահութեամբ մեր սիրելի Ազգին և անոր յառաջադիւմութեան միշտ բարեմաղթով կը մնանք»:

Սոյն ճառս լրանալէն յետոյ, շնորհակալութեան համար ևս կարգացուեցան. մին ի կողմանէ եկեղեցական գաւառ, երկրորդն՝ Քաղաքական ժողովոյ. և սոյն առթիւ նուիրեցին վսեմ մահտեսի Երզնկայէ ֆէնտիին դաբնեայ պապ մի յորում գրուած էր. ԱԶԳՍ ՀԱՄԱՅՆ ԵՐԱՅՍԱԿԻՏ: Հանդեսը լրացաւ մի քանի երգերով բնկերակցութեամբ նուագարանաց որոյ առաջինն զոր յօրինած էր պատուելի Ս. Պալապանեան եֆէնալիս և եղանակաւորեալ յարգոյ վարդան էֆ. Փափազեան, էր ի դէմն Սպարթալեան

#### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Պատասխանի դիտողութեան պարոն Գ.  
տէր Գ. Գապարեան: (1)

Կարի անագան, այն է ի Սեպտեմբերի սոյն տարւոյ եհաս ի ձեռն մեր աստ պատուական օրագիր Արշալոյս Արարիչի, հրատարակեալն ի 4 Փետրվար 1878 որ ընդ 1085 թուով: Ուր բնութեցաւ և զասացեալ դիտողութիւնս պարոն Գ. տէր Գ. Գապարեան ի Բաթմալիոյ՝ ընդդէմ կառավարութեան արկել աղքատաց Զուլայ, իբր թէ ոչ ըստ արժանեաց անաշուապէս բաշխեմք զառատածեռն օգնականութեան տուրս պատուական Հնդկարնակ մերադնեայց՝ կարօտաւորացն քաղաքիս:

Ընդ այս բան զրպարտութեան պատանդն չղարմանամք ինչ, զի երրորդ է այս նորա երազ զոր առ օգտի անձին, տեղի և անտեղի երազէ երբեմն ի դուրս ի ին, և երբեմն ևս ի պարտաւանս անհատից ոմանց՝ թերևս ի հաճոյս յաշաղկոտաց՝ որոց անործելի է լսել միշտ զայնպիսինս: Ոչ երբէք փառս համարեցաք կառավարութեան մերում զաշխարհաշուր դժգոյնութիւնս ներադնին եւրոպացի դրչոյ աստի յառաջնումն՝ ըստ ականատես փայլութեանցն հաւատարիմ գործողութեանս. և ոչ անարդանս վարկցուք

(1) Զառաջիկայ յօդուածս, յուղարկեալ մեզ ի Նոր Զուլայէ, գտնով պատասխանի յօդուածոյն ձրատալակելոյ ի լրագրիս ի քիս 1085, փութամբ տալ ի հրատարակումն յարգելով զսկզբունս մեր որ է անկողմասիրտութիւն:

յերկրորդումն զմիւս այլ երազ պատանդն. զի որպէս միշտ, նոյն և այժմ իսկ ի փառս Աստուծոյ համարին անձնանուէր մեր վաստակք ի պաշտօնիս, որ հաւատացաւ մեզ յետ բազմադիմի փորձառութեանց ի նախնի և յարդի իսկ սրբազան Առաջնորդաց մերոց, ձայնակցութեամբ համայն ականաւորաց և պատուելի ժողովրդեան քաղաքիս՝ որք օրըստօրեայ վկայք են «անաշուառութեանս» մերում, ըստորում և գերապատիւ հոգաբարձութիւնն սրբոյ Յովհաննու եկեղեցւոյն Բաթմալիոյ իսկ, որ յատուկ իմն մտադիր ընալ ամենայն գործառնութեանց արկելոյ, ընդունի ի մէջ միշտ զհաշիւս հաստատեալս արդարասէր և արժանահաւատ փայլիւր աստի, և միայ ընդ այն բաւական և դոհ. բայց որպէսզի մի՞ գայթակղեցնին ի բանից անտի պատանդն հեռուոր ազգասէրք, հարկադրեմք լուծանել զխարդաւանութիւնն յիւր իսկ գրուածոցն, թէ և ինքնին իսկ լուծեալ և յայտնի է առաջի մանուանդ ամենայն բանասիրաց, թէ՛ թէ ծանօթ իցն մերս գործողութեանց:

Շատ էին միջոյք ազգասէր կամաղքտասէր ձեւացեալ պատանդն թէ անդ ի Բաթմալիս՝ որպէս ցուցաբոս, և թէ աստ ի Զուլայ, մանաւանդ որ մերձակայ ընտանիքն են իւր, յորոց մարթ իսկ էր նորա տեղեկանալ ի վերայ «անաշուառութեանս» մերում՝ եթէ կամէրք քան թէ խեցի առեալ վարկաբարձի քերել զսիրան ի լուր աշխարհի, թերևս և ի գայթակղութիւն բազում անձնօթից. այլ այն զի յատուկ իմն բնաւորութիւն երեւի լինի նորա՝ պատաղիլ միշտ զայնպիսի դատարկարանութեամբ, և ակ-

ներե ցուցանի ի յետագայ շարայարութենէ խօսիցն Արշալոսի անդր:

«Զուլայ, ասէ, ունի այժմ 400 տուն բնակիչս... յորոց 70 տունք են գրեթէ կարօտաւորք. մնացեալքն ճոխ են և գտանն տարեկան առատ նպաստս ի մերձաւոր ազգականաց իւրեանց բնակելոց ի Հնդկաստան: Աղքատք, իմա՛ զայրի կանայս, որք չունին ուստեք յոյս, ճարահատեալ դիմեն առ բողոքական տեղւոյն, որք սիրով բնդգրկեն զնոսա ի հաւատ իւրեանց և բազումք յարանց անճարացեալ խոյս տան ի ձեռաց պարտատեարց ի կողմանս Հնդկաստանի որոց թիւ հաշուի գոյ վասն իւրաքանչիւր ամին առաւել քան 100...: Որք շրաւականանալով տրիւք ազգայնոց, դիմեն առ օտարականս ի նախատինս Հայ ազգին: Եւ ի լուծումն այս օրինակ առարկութեանն ի վերայ բերէ և զայս. «ոչ ապաքէն առատածեռն տուրք առաքեալք ի Զուլայ՝ յոյս ցնդին առանց հասանելոյ առ բարի նպատակ իւրեանց»: Եւ որպէս թէ անտեղեկս համարեալ յանախական հասակին՝ զսոհական բարեբարս ազգիս ի վերայ մերս գործողութեանց, խրատս կարդայ նոցանց՝ իւրեւ գործակից նոցա թէ, «Եթէ իմն գործ աղքատիրական վարկանեցուք (1) եթէ Հնդկարնակ Հայք՝ փոխանակ տուրս առաքելոյ ի վայելումն ճոխ անհատից ոմանց Զուլայու, խախտեցն զայնս բնալին բոլորովն և փութացն նպատամտոյց լինել ըստ արժանոյն աղքատաց դիմելոց առ ինքեանս, և այլն»:

Ի պատասխանի այսպիսի առարկութեանց

(1) Զոր պարտ էր գրել վարկցուք:

Ծ. Ն.

եղբարց, և երգ մի ևս տաճկերէն լեզուաւ ի վերայ վեհ. Սուլթան Համիտ կայսեր Յետ որոյ վար իջնելով, խորհրդարանի սրահին մէջ պահ մի հանգիստ առին, որ զբողոքուած էր ամենայն կարեւոր կահիւք, ուր կրտսեմութիւն վեհ կայսեր, Սրբազնակոտար Տ. Գէորգայ Գ. կաթողիկոսին, Տ. Ներսէս ամեն. Պատրիարքի և վեհ. Սպարթապետի երկուց եղբարց կենդանադիրները:

Յենթացս բոլոր սոյն ազգային հանդիսիս. ոչ զլացաւ բախմբակի հասարակութիւնն իւր երախտապարտ ոգացմունքներն ի սրտէ յայտնելոյ կենդանի ձայնիւ կեցցեն Սպարթապետն եղբարք գոյն ի փառաբանութեամբ արտասուող ընտանիքներ անգամ իրենց երախտապարտութեան նշաններն ցոյց տուին մահաւորի եղբարքէ Գ. Ներսէսի հանդէպ: Երաժ ժամանակ պատու հաններէն ծաղիկներ թափելով նորա գլխուն:

Այսպիսի հանդէսներու մէջ, մանաւանդ երբ հողեւորականի հետ առնչութիւն ունի, բնականապէս խաղաղ արարողութիւն մի ևս տեղի կ'ունենայ. ուրախ եմք ըսելոյ՝ որ բարեպաշտ հանդիսականք անխտիր՝ իրենց կամաւոր նուէրներովը թապալն գահաջնեւէն զատ, երեւի ազգայիններէն ոմանք Հիւանդանոցի հողաբարձութեան կողմէ եղած առաջարկութիւնն ևս սիրով ընդունելով՝ առանձին գումարներ ստորագրուեցան, որոց բոլորին արգիւնքը հասած է մինչև 45,000 դահեկանի:

Չմոռնա՞մք ըսելոյ որ, վսեմ. Սպարթապետն եղբարք հիւանդանոցի շինութեան զատ, յորում կը բովանդակի ամեն կարեւոր մասերը հանգերձ բաղանեօք և այլն, հոգացած են նաև բոլոր կահ կարասիքները թէ սենեկաց, թէ սեղանատան, այլովքն հանգերձ, և ինչպէս կը հաստատեն բովանդակ շինութեան ծախք 10 000 իրա եղած է:

Իւր որովհետև սոյն ազգային հանդիսիս իրական սեռը ներկայ չէր, վասնորոյ հետեւեալ դէպքը միւսնոյն հանդէսը կրկնեցաւ յատկապէս կանանց համար: Պատարագիչ էր փրկողէմեան Գեորգ. Ղեւնդ վարդապետ. ներկայ գտնուեցաւ Գարձեալ Գեորգ. Առաջնորդն, և ըստ խնդրոյ տիկնաց չլացաւ նաև վսեմ. մահաւորի եղբարքէ Գ. Ներսէսի իւր ներկայութեամբ պատուել երկրորդ անգամ Բացման Հանդէս. որոց զիմաց խումբ մի գեղեցիկ սեռէն ծոխազգեստ զարդարուած գիւմարներն ի ձայն քաղցր երաժշտութեան, ծաղկանց փունջեր նուիրելով և աղանձներ արձակելով ի պատիւ ազգային Բա-

րերարին: Նոյն պատուով ընդունեցին նաև Ն. Վսեմութեան աղնուաշուք ընտանիքը՝ թէև առանց երաժշտական երգոց: Մի և նոյն ճառը ի դիմաց Սպարթապետն ապաշտապաշտ կրկնուեցաւ նաև ի լուր հանդիսատիկնաց, որոց կողմէ ճառը և կարգացուեցաւ ի ցոյց երախտագիտութեան առ ժաշուք Գեորգաստանն Սպարթապետն: Գարձեալ ստանալով ուղերձ մի ընթերցաւ. օրհորդ մի յորինեալ ի յարգոյ Չարմայր Ս. Չարքեան Էֆէնտիէ, թէ սոյն ոտանաւորը և թէ Պաշտպանեան Էֆէնտիի յորինած երգը ստիպուած եմք եկող թուով հրատարակելոյ:

Սոյն հանդէսս բոլոր իւր փառաւորութեամբը և թէ ազգային երախտագիտութեան բոլոր այս ցոյցերը, ոչ այլ ինչ են ըստ մեզ, եթէ ոչ վառ խորովի մէջէ արձակուած փայլուն նշոյլներ, որ իրեն զմուխ կըցնդին ոչ մի թողով հետք մշտնջենաւոր յիշատակի, վասնորոյ մեք Սպարթապետն եղբարք և նոյնն աղնուաշուք Գեորգաստանին գէմ աղբովին ունեցած երախտագիտութեան նշանը ազգաց յաղթս մշտնջենաւորները համար կ'առաջարկեմք եկեղեցւոյս որ սոյն հանդիսիս տարեգարծը ամ յամէ կատարուի հիւանդանոցի եկեղեցւոյ մէջ հողեւոր պաշտամանք և հանդիսաւոր պատարագ մատուցուելով յաւուր տօնի Ռեզուցն Ռոտման Գալուայ և Յովհաննու երկուց անուանակցաց մեծապատիւ եղբարց, և յետոյ յիշեալ հասարակութեան մէջ պատասխարեալ խղճալեաց յատուկ սեղան տրուի ի մշտնջենաւոր յիշատակ մեծանուն Գեորգաստանին: Այս է մեր փառաքին, որ և կը յաւանդէ թէ կ'ընդունուի եկեղեցւոյս իրաւունք, որով խանդաղատեալ ի սրտէ կ'ասեմք յիշատակ արգարոյն օրհնութեամբ և զիցի:

Սոյն առուր եղած թէ թապալն և թէ գրքատնքէ գոյացած արդիւնքը 20,000 դահեկան, եղած է, որով ընդամենը ինն 65,000:

Յիշատակութեան արժանի է քաղաքի Ռոտման մարապետաց գայրոյի տեսչուհի Սեօր Միկայի իւր Հայ աշակերտահետ հետ հանդիսիս ներկայ գտնուին և հայերէն երգել տալը՝ նոյնպէս և 5 իւրա նուէր շնորհելը:

## Խ Օ Ս Բ

Ի հանդիսի նորոգ բացման ազգային Հիւանդանոցին Չմիտնելոյ:

Պատուական Հայ Ժողովուրդ,

Այս չքեղ հանդիսիս նպատակը նուիրական է: Մեծ

բոտաւորացն ասէ՝ զորս 170 տունս բովանդակէ, անշուշտ զարս այրեացն ցուցանէ ինչիւ եթէ ոչ, հարկ էր նմա ուրեմն երեւցուցանել արտաքոյ 400 տանցն զմիւս այլ հարկաւոր տունս, յորոց «ճօխք ոմանքն» ի տուրն վայելէ, և կարօտքն կամ անճարք ի Հնդկիկ խոյս տային, որպէսզի այնու արդարանայր ի բանս իւր:

Երկրորդ՝ խնդրեմք զի ցուցցէ թէ որով հաստատութեամբ ասէ՝ նա Գեորգ Գեորգի աղբաւորացն առատաձեւն արցն» կամ «ճօխք անհատք ոմանքն» ոչք կամ զի՞նչ են անուանքն՝ որ վայելին ի տուրն: Ի տուրն ասեմք, յոր վերայ բաց են աչք այնչափ ներկայ և բացակայ խոհուն աղքատաւորաց՝ տեսչաց և խնամատարաց թող թէ բազմութեան անհամար կարօտաւորաց յորոց սակի են անտ և քանի մի իւր իսկ ընտանիք, զանուանս որոց եթէ հաճեսցի, տացուք նմա գիտել ի հարկի պահանջման եթէ ինքն չկարիցէ զմիտայն ցուցանել: Մի՞ գուցէ ճօխք անհատ ոմանքն՝ յիշեալ ընտանիքն են իւր, որ իրեն ի շնորհս իւր անկարօտք, բայց ազահեն յիշաւուն աղքատին: Եթէ ի հեռուստ անտի լաւ ևս քան զմեզ ծանեալ զնոսա գոյ ճօխք, հաճեսցի ուրեմն արգելուլ զնոսա ի մարալոյն իսկ եթէ կարօտք որպէս և են իսկ, փութասցի ինքնին իսկ օգնել նոցա՝ որպէս աղքատասէր ոք քան ընտանեւէր, զի մի ծանրացին նոքա ի վերայ աղիւղս, և ի խաղաղութեան միտմ արցն հայրենասիրացն՝ ըստ իւրումն խրատու խոյս ի Հնդկիկ տայցեն նոքա յանկարծուտ ի նախադիմս առաւել իւր յայնժամ,

պարտաւորութիւն մը ունիմ կատարելու իմ և սրբի եղբոր Յովհաննու կողմէ, որ Եւրոպա գտնուելուն իր զգացմանը թարգմանն եմ, բոլոր Չմիտն ոչ Հայ Ժողովրդեան և Չեղմով բոլոր Հայ ազգին առջև, սոյն նոյն խոյսոց հաստատութեան մէջ, ուր գումարաւորած կը տեսնեմ խնդութեամբ ազայնոց ընտիր բաղնիքին մը: Մեր կենաց ամենեւեմի օրերն մէկն է այս օրս, վասնոր կը տեսնենք սպաւորած խորհուրդ մը որ ի վաղուց մեր սրտին ու մտքին մէջ ծագեր էր և որ Ամենա կարողին Աստուծոյ օգնութեան և հոգեւոր ձայնի մը ներգործութեան կարօտ էր որպէսզի մարմին առնու:

Աստուած մեր ուխտն ու խղճը լսեց, հնչեց ու ներշնչեց այդ ձայնն մեր հոգւոյն մէջ և այս նորոշին ազգային շէնքն, տառապեալ մարդկութեան այս կոյտնը կազմեցաւ: Փառք կուտանք Աստուծոյ որ իր նախախառնութեան ընտիր զմեզ երկրորդ հարաշատ եղբարքս այս վերաշինութեան:

Ազգին ներկայ միմակին վերահասու վշտակիր կղզի տէինք իր բազմատեսակ պիտոյքն և մեր կարողութեան չափովն այս պիտոյք մին լեցնելու հոգ մեր տիրական փառաբը դարձաւ: Այս մեր փառաբը որչափ զօրանայր նոյնչափ Աստուծոյ յաջողութեամբ կ'աճէին մեր անկարողութեան աւելի, մեր նիւթական կարողութեան միջոցներն, (և մինչդեռ մեր ունեցածն բաժին մը ազգին շնորհելու խորհուրդը կրտածէինք) մեր գիր. Առաջնորդ Ս. Հօր Տ. Մեղիսիոսի Գ. վարդապետի Մոբատեանց հոգեւոր և հայրենասիրական քարոզներն եկան և աւելի ևս բորբոքեցին մեր սիրտն և մեր սիրելի ազգին մշտնջենական ծառայութիւն մ'ընելու տենչը:

Արդարեւ մեր եկեղեցին, մեր վարժարաններն ու հիւանդանոցը կարօտ էին սատարութեան, բայց զիմաց որպէս ազգային հին ու խաղաղ Հիւանդանոցի շէնքն, անոր մէջ պատասխարեալ խղճաւայն միմակն, խնամութեան հեծեման մը աչքին ներկայացան, մեր սիրտը շարժեցին, և երկու հարաշատս որոշեցին ի հիմանց նորոգ կառուցանել ազգային շէնք մը որ ոչ ներքին բարեկարգ կողմաւորութեան, ոչ կանոնաւոր մատակարարութեան, և ոչ ողջապահութեան էական պայմաններս ունէր:

Այս մեր որոշումն ազգային վարչութեան հաղորդելով իր յոժարախոյն հաւանութիւնը ստացանք և զոր ծի սկսանք: Չեք ուզեր երկարօրէն բացատրել թէ ինչ զգացումներ կը համակին մեր սիրտն քանի կը յառաջանար այս ձեռնարկութիւնը, քանի կը մտածէինք որ Աստուծոյ և մարդկութեան հաճելի եղող զործի մը սատար ները լինելու բարեբաղդութիւնն ունէինք: Եւ արդարեւ կան գործեր որ աւելի ևս կը զգուշան ու կը հրապարակեն մարդկային միտքն ու հոգին քան թէ միառասիրական յաղթանակներ և վաղանցուկ յաջողութիւններ, և այս

քան թէ «Հայ ազգին»

Թերեւս հարցցի ի մէջ, ոչք ոմանք դիմադրեն առ բողոքականս իցեն: Յայրենացն դասուցըստ քաջալայտ գոյոյ ամենեւեմն 6 կանայք միայն աննշանք, որք յազահութենէ առաւել քան յանճարութենէ ստիպեալք՝ դիմեն առ նոսա ստեպ և վերագառնան առ մեզ, անբաւական կացեալ ընդ երկուց կողմանց տուրս մեր և նոցա. մինչդեռ բաղմաց քան զնոսին կարօտագունից՝ շատացեալ վաստակօք ձեռացն, և չափաւոր տրիւք արկեղծ միայն, օրհնեն ջերմեղծ դարբերարացն կանաւ, վմահ առաւել ընտրելով քան զօջաքաղութեան սակս հաւատալիս լինիլըն: Կան այս և քանի մի անկարօտ գերդաստանք՝ նովին իսկ ակտիւք վարակեալք. մանաւանդ յենդ վայրայած գատարկապարտից դարձելոյ ի Հնդկաստանայ (զորոց ի վերջ կոյս բանիցն ասէ դրին անուր թէ, «Ի վերագառնան իւրենաց ի Զուգա ընչեղ համարին և ճօխ առ ժամանակ ինչ») որք ի բնէ անտի կեղծք, ի հաւատան զեղծք և ի կարծիքս յամառք: յորոց ոմանք առ նախանձու և հակառակութեան կէսք վասն զիմաձեւն թողակս ընդունելոյ ի վարժարանէ անտի նոցունց և ի ժողովարանէ պատրուակաւ ուսման և սպասահարկութեան պաշտամանցն, և այլք՝ սակս ընդ հոգի պաշտպանութեամբ աներկիւղ ըստ կամ անձանցն գնալոյ, և բարեկոյ զուղղափառ հաւատս մեր ի շողքորթութիւն նոյնին՝ յատկապէս յանտիրութեանս ժամանակի աստ մերում, յարեցան ի բողոքականութիւն, ըստ որոց և քանի մի ստորագրաւք երբեմն ի մահմետականութիւն, յոր

որոշ է թշուառ մարդկութեան վիշտին քան զայն  
վերջին գործը և ասկից ծագած միջոց արթնելը :  
Եւ աստ պարզ կըստ իմ կանգուն սորն նոյն չէն Ս.  
ԱՐՄԱՆՈՐԶԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒՆԴԱՆՈՅՆ, որու  
առաջին առթիւն վերաբոյժեալ է և յանուն Ս.  
Հին մերայ Գիւղերի Լուստորդի հակառակ տաճարն,  
ձեռնարկ նաեւ անոր կից նոր պահարան և սեղան, որ  
այսպէս առաջին օրն յանուն սրբոյ Արդուցն Զ. Երեւայ  
կոչուող է. Յովհաննու տեառնագրութեամբ օծուեցաւ  
Եւ Ս. Զարեհ Զոր ձեռք, և նուիրեցաւ ի փառս  
Աստուծոյ, մշտնջենաւոր յիշատակ երկուց  
արարատ եղբարցոյ տնտան Յակոբայ և Յովհաննու :  
Այնիւ ժողովուրդ Հայոց, մեր ախտն ու փափազը  
հաստատելով՝ կատարեցինք ազգային պարտաւորութիւն  
և փոխարէն վարձատրութիւն սխիւթ լինին մեզի մար-  
տիրական գործի մը պատճառած ներքին գոհունա-  
լութեան զգացումն և սոյն ազգային շնորհն մէջ պա-  
տարարելիք ազգին անկարող անտէրութիւնը հիւանդաց  
արջիքն ու օրհնները : Աստի կըմնայ մեզ՝ ազգին հին  
հանգանոցը հիմնովին նորոգուած ազգին դարձնել,  
որ յատուկ չ'որհակալիր յայտնելով մեր գեր. Ս. Զոր  
Ս. Հայոց, նոյնպէս բոլոր ազգային պաշտօնէնց և  
տնայն ազգայնոց որ իրենց քաջաբերական ու համակիր  
ընդունելով զիրացուցին մեզի այս հիմնարկութեան  
ձեռքինը. և մտնաւանգ ազգային Արարչութեան, որ  
հետեւեալ նոր հոգաբարձութիւն և գերապա. հայր  
կանգ Գիրգուլեանն վերատեսուչ հաստատելով  
որն պարտաւորիչ կանոն դրաւ մեր ազգատնային միշտ  
պիտիւ հոգի իրեն անդամակից ընդունել ամեն հոգա-  
բարձութեան ընտրութեան ժամանակ : Այս որոշումն  
որն ազգային փառահաճութեան և երախտագիտութեան  
ան ընդունելով՝ յատկապէս կ'այստենք որ այս մեր  
տնայն զխտովն գործադրած պիտի լինին ազգն ու ազգ.  
Արարչութիւններն եթէ միշտ սոյն հաստատութեան  
երկին բարեկարգութեան և բարեք մատակարարու-  
ման ջանալիք գտնուին. և ներքի մեզ յատկապէս  
ազգէլ Հոգաբարձութիւնն որ նոյնպէս իր ուշադրու-  
թիւնը դարձնելով թագուն խորհրդ. մէջ գտնուող ազգ-  
անակ ընտանիքներու, նոյն Տեառնագ Զրի բիւրէի,  
ի և կարեւոր պիտոյք յուղարկելով որպէսզի սոյն  
Թշուառներն իսկ տնայնութեամբ չ'մնան : Այլն այս ա-  
մէ բարձր կըլայելէ ընդ հովանաւորութեամբ Օսման-  
ան Վիստութեան, որու վեհապետն Ստիվան Համիտ'  
մարդասիրական զգացումներով լի՝ իր բոլոր հպա-  
տակաց ազգային հիմնարկութիւններն ու արտօնութիւն-  
ները պահպանելով՝ մեր առջև առատ ասպարէզ կրթա-  
ւոր մեր եկեղեցիներն, մեր վարձարաններն ու հիւան-  
դանոցը վարդապետու, ինչպէս նաեւ իր արժանաւոր  
կրթայարուցիչն, զատուիս փեսայիս Համիտի փաշան

որու արդարակրօն կառավարութեան ժամանակ այս  
հիմնարկութիւնն յաջողութեամբ կ'անգնեցաւ :  
Արք. սուրբ Հայր Եւ. քահանայք, ազգ. Ժողովք ու  
խոր. ուրդք և հոգաբարձութիւն և համայն Ժողովուրդ,  
այս հանգիստական ժամուս, նորաշէն հիւանդանոցի նա-  
ւակառուաց առթիւն կը յայտարարեմ որ ձեզի պէս հան-  
դիսական հայ մ'եմ այս տեղ, ազգային անհատ մը, որ  
լի պարտաւորութիւն մը կատարած եղաւ իր հարազատ  
եղբոր հետ սոյն շէնքը բարձրացնելով, որ Աստուծոյ  
պարգևն է, և զոր կը նուիրենք սրտի խնդութեամբ սի-  
րելի ազգիս հայոց ի փառս ամենամեծ տնտան Աստու-  
ծոյ և ի յիշատակ յաւիտենական :  
Աստի, գերապատիւ Ս. Հայր, առէք, կ'աւան-  
դենք ձեզի սոյն նորաշէն հաստատութեան բանալիներն  
և ձեզմով հասօրէն ազգիս, և ուրիշ փառապիտեութիւն  
մը չունինք՝ այլ միայն տեսնել հեռուէն սոյն հաստա-  
տութեան պայծառութիւնն ու հրճուիլ, ըսել բուժեալ  
տառապեղոյ օրհններն ու միջոցաւ, տեսնել ազգայ-  
ին տան ուրիշ կարեւոր պիտոյքը հոգաբարձ հետամուտ բա-  
րեւորներ և զԱստուծոյ փառաբանել :  
Այս է մեր իշխը, մեր ուխտն ու կտակը, որու գոր-  
ծադրութիւնը կը յանձնենք ամենայն վստահութեամբ  
մեր սիրելի ազգին և անոր յառաջադիմութեան միշտ  
բարեմաղթով կը մնանք :  
Զմիւռնիս, 14 Յունիս 1879 :  
Եւրաք Յակոբ Եւ Յովհաննէս Սպարաբեան.  
ԱԶԳԱՅԻՆ ԹԵԱՆ ԿԱՊԸ  
Փաղաքիս երկրասարգաց կարեւոր զգաց-  
մունքներէ զուրկ լինելուն վերայ գանգատող  
բարեկամ, որ իւր խօսակցութեան թելը ընդ-  
հատելով հեռացեր էր ինձնէ, այս օրերս կրկին  
հաստահեցաւ ինձ և ներումն խնդրելով շարու-  
նակեց խօսել : Գոհ եմ ձեր բարեկամութենէն  
ասաց, մանաւանդ խմբագիր լինելէդ. վստայի  
ստիպուած կըլինեմ միշտ կարեւոր նիւթոց վրայ  
հետք խօսելը, ըստ սրտմ' կըտեսնեմ որ մեր  
խօսակցութիւններն անմիջապէս ի հրապարակ  
կ'ելնեն : Փաղաքիս երկրասարգացից անզգայու-  
թեան մասին գանգատը բրած ժամանակս, կը  
խնդրեմ որ ինձ ներքէք եթէ զիս իբրեւ զգայուն  
ու կընեկեցայացնեմ ձեզ. այս զուրկ չեմ զգաց-  
մունքներէ, բայց անոնց երեք քառորդ մասը  
կրօնական են. թերեւ ծիծաղիք վրաս կամ ծաղ-  
րէք ևս նիւթապաշտութեան կամ դրակա-  
նութեան (positivisme) տեսակետէն դիտելով.  
ինձ հոգ չէ. զգացմունք փոխելը ըստ հոգեբա-  
նից՝ հոգեկան դրութեան մէջ յեղափոխութիւն  
ձգել ըսել է : Եթէ յանցանք է, թող իմ յան-

ձանքս ալ կրօնական զգացմունքներս լինին,  
բաւական է որ ես անոնց մէջ գտնեմ հոգւոյ  
երկանկութիւն, խղճի հանգարտութիւն և խոր-  
հրդոց յատակութիւն :  
Անցեալ օր բարեկամաց մէկուն քոյն էի, և  
ինչպէս սովորութիւն է ինձ, կրօնական խնդրոյ  
վերայ խօսք բացի. մի քանի այլ անձինք ևս  
Ժողոված էին նորա մօտ. առաջարկութիւն մի  
ըրի թէ՛ ազգութեան կապն ո՞րն է արդեօք,  
լեզուն, կրօնը, քաղաքականութիւնը, ազգա-  
յին աւանդութեանց պահպանութիւնը, թէ  
ուրիշ մի այլ առարկայ : Բարեկամս, որ ինձ  
չափ կրօնասիրութիւն չունի, բայց ուղիղ դա-  
տողութեան տէր անձ է, պատասխան տուաւ  
ինձ. ազգի մի միութեան կապ, եթէ ունի նա  
քաղաքական ինքնօրինութիւն կամ գէթ ինք-  
նավարութիւն, նոյնիսկ քաղաքականութիւնն է  
իւր ազգութեան միաւորիչ կապ. իսկ որքան  
առ ազգն մեր, մոտիկ ըրէք ինչ որ ես անձամբ  
զգացած ու վորձած եմ : Ինչպէս կըտեսնէք, բա-  
ւական տարիներէ հետէ իմ ազգայիններէս հե-  
ռացած կ'ապրեմ. դրակիցներս յոյն կամ եւրո-  
պացի են. չուկայի դրացիներս նոյնպէս յոյն  
կամ իսլամք են, քովս յաճախողները մեծ մա-  
սամբ հրեայ միջնորդներ են. յարաբերութիւնս  
գրեթէ բոլորովին օտար ազգաց հետ են : Մանչ  
աղայքս Պարսկերի գաղութն, իսկ աղիւնները Տի-  
աքունէից մօտ կ'երթան. ասոնց լեզուն թէ  
գաղութներուն և թէ տանը մէջ յունարէն է, ո-  
րովհետեւ անեցի սպասաւորներս և սպասուհիք  
ալ յոյն են. սոյն պատճառով թէ ես և թէ ա-  
մուսնս ստիպուած եմ յունարէն լեզու գոր-  
ծածել. եթէ օտար Հայ մի զմեզ տեսնէ տան  
մէջ, անպատճառ յոյն ընտանիք պիտի կարծէ.  
Հայերէն լեզուաւ միմիայն ես և ամուսնս կը-  
խօսինք իրարու հետ, որ կերպով մի առաքա-  
տի լեզու դարձած է մեզ, Մինչև այստեղ պատ-  
մածէս կըմակաբերէք անշուշտ որ մեր գերդաս-  
տանին վերայ հայութեան ոչ հոգին կայ և ոչ  
նորհը, թէպէտեւ այր և կին գիտեմք հայերէն  
բայց հայերէն գիտնալն ընաւ օգուտ չունի և  
Հայ հասարակութեան մասն չեմք կազմեր, ո-  
րովհետեւ յարաբերութիւննիս դադրած է ի-  
րարմէ :  
Բայց կայ իմ սրտիս մէջ բարի զգացում մի,  
զոր ծնողացմէ ժառանգած եմ, որոնք ի տղա-  
յութեանս ներշնչած են իմ հոգւոյս մէջ, այն է  
կրօնական սէրը զոր ունիմաւ մայրենի եկեղե-  
ցին իմ, յորում ծնած եմ. վստան որոյ երբ կիւ-

եմ չէր ի միջի աստ ոչ արկղ աղքատաց, և  
նախընթաց քարոզիչ, կամ ի ձեռն յայս  
խիման հաստատեալ առատ գումարովք որսող  
ը, յորպիսեաց բազում են ամենայն ուրեք,  
առկապէս ի նոյն ինքն իսկ յեւրոպա թիւու-  
աւորեալ և ի ճոխացեալ աղիննս, (որք չեն ան-  
ար) որ յաղանգան բազմառեւակք, ի կարծիս  
կիրս հաւատոյն՝ հակառակ իրերաց և անմի-  
արանք, և ի հաւատան հետեւաբար թոյլք ի յա-  
ւատ գայթակղութիւն, յանհատաւորութիւն և  
յախճումն մօտց ոչ իմաստնոյն միայն անտի և  
անմիացն, այլև կռապաշտիցն, այլև ամենայն  
որս գործեն նոքա մուտ, այլև մերս իսկ որ  
աստ ազգիաց, ըստ որում քաջ այժմէն իսկ  
կայի յոմանց ի փողոցս քաղաքիս զօրն ողջոյն  
որմայեց նստելոցն, որք լինալ զգործս, անլուր  
այնի ումք, մերս ասեմ՝ պապականաց և բո-  
ղոքականաց, ի վերայ երկից արդեօք ճանապար-  
հաց գտանին տարակուսեալք և թմրեալք :  
Իսկ զի՞նչ և վստան քանի մի յանուանէ իսկ  
ճանաչեալ գործատեցիցն ասացուք, որք թէ  
չ'հեղատան և թէ աստ լեալք, չեն այժմ  
թուով աւելի քան իբրեւ զ40 անձինս, թէ և ոչ  
ամենքեան ջուղայեցիք՝ որչափ և գեղջուկք,  
որս չափազանցաբար և անորոշ առեալ պա-  
տանին զրախօս, հաճի և կոչել զայնպիսին յա-  
ւատ անձար և ի ձեռաց պարտատեարցն խուս-  
եալք՝ քան գատարկացած մուրացկանք, որք  
թէ և առողջք անգամք, մինչ կարել ի հաղա-  
բար մշտն աստէն ի Հեղատան առնել  
ընամաղարհ և ներքէ ստեպ զբարեսիրտ հա-  
մաղիս, բայց ոչ գործել ի լուսադոյն օգի

տակաւորացն՝ (իմա կառավարչութեան արկեղն  
աղքատաց) անքնաբար և յանիրաւս խիզախէ-  
ղԱստուածասիրացն գութ՝ ի բաշմութենէ ան-  
ճարիցն հայրենեաց խափանել նկրտի. և զան-  
ճանօթ զհեռաւոր համազգեացն սիրտ վրդո-  
վել ախորժէ. և այսու ամենայնիւ ինքն իսկ  
մասն լինի ինքեան չլինել ծառ բարի, որչափ  
թէ «ի պողոյն ճանաչել և զինքն» Մատ. է. 16:20:  
Ապա մնայ մեզ աստանօր հայցել ի Տեառնէ՝  
տալ զերկիւղ իւր սուրբ՝ որ է սկիզբն իմաստու-  
թեան, ոչ միայն ի սիրտ պատանւոյն՝ առ ի  
զգաստանալ և զսպել զգրիչ իւր յայս օրինակ  
զրախիւրի և դայթակղատ գրուածոց, այլ նաեւ  
ի սիրտ թափառական մուրացկանացն և վայ-  
րաքաշից, առ ի քաջ ճանաչել զպարտիսն որ  
առ Աստուած, առ ընկերս և առ անձինն իսկ,  
յուշի ունելով միշտ զայն բան Մարգարէին՝ որ  
ասէ թէ, «մարդոյ լեզուանոյ մի՛ յաշողեսցի ի  
վերայ երկրի. զայր մե . . . » Սաղմ. ճլթ. 12:  
Եւ զիմաստնոյն թէ, «Որ ձեռնամուխ լիցի ի  
տարապարտուց՝ ոչ արդարացի» : Առակ. Ժգ.  
5, Եւս և զխտուածականն զայն վճիռ թէ,  
«Բրտամբք երեսաց քոց կերիցես զհայ քո» :  
Ծնդ. Գ. 19 : Որպէսզի բարեզարդեալք այնու  
լիցին յայր կատարեալ, սիրելիք Աստուծոյ և  
մարդկան, և տեղի խնդութեան և պարճանաց  
պատուական Ազգիս :

Տէր Սեդեքտարս Յովհաննէսեան  
Ի Նորջուղա 40)22 Սեպ.  
1878  
Տէր Մեսրոպ Է. Գաբրեան  
Տէր Մեսրոպ Գ. Գրիգորեան  
Մարգար Սիմոնեան :  
Հոգաբարձութեան արկեղ աղքատացն Նոր Զուղայ :

բակէ օր կուգայ, նոյն զգացումը բնազդ մամբ մի կ'արթնայ յիս, և եթէ ոչ ամեն անգամուն գոնէ ամիսը մի կամ երկու անգամ ամեն ակումբ օրերը առանձին և շատ անգամ ընտանեօք հանդերձ կառք նստելով կ'երթամ եկեղեցին: Հոն կըտեսնեմ Հայեր, որ դիւ գառնամ հայու պատկերներ կընշմարեմ, հայու լեզու կը լսեմ. սիրտս կըլեցուի զմայլմամբ, հոգիս կը զուարթանայ. կըխանդաղատիմ մանաւանդ հայկական եկեղեցւոյ ասմունքներուն և հոգեւոր երգոց վերայ, երբ կըլսեմ զուրբ Աւետարանը կարդալին այն լեզուով և այն գիրերով զոր գրողներն մեր նախնի սուրբ Հարք. այն վսեմ գրաբառ լեզուն զոր լուսահոգի հայրս մեծ ջանքով սովորիլ առած էր ինձ Մեսրոպեան գալղոցիս մէջ երջանկայիշատակ հանգուցեալ Անդրէաս վարժապետի օրով: Զինի արձակման ժամուռ ըստ սովորութեան այցելութիւն կուտամ մերձաւոր ազգականաց և բարեկամաց. որոց քով մեր խօսակցութիւնները միշտ հայերէն լեզուով կըլինին. անոնց մօտ ամեն ինչ հայկական է, հայկական լեզու, հայկական նիւթոց վերայ խօսակցութիւններ. անոնց մօտ կ'իմանամ քաղաքիս Հայ հասարակութեան մասին թէ ուրախալի և թէ տխրալի տեղեկութիւններ. վերջապէս անոնց մօտ կըզգամ Հայ լինիլ. և ասոնց ամենուն միակ պատճառ կըգտնեմ իմ կրօնս, իմ եկեղեցիս. որ կապ մի եղած է իմ և իմ ազգիս մէջտեղ, ապա թէ ոչ բնակութեամբ հեռի լինելովս, խալառ պիտի հեռանայի հանդերձ ընտանեօք և հայրութենէ: Ահա կըտեսնէք, կըկենց նա վերջացնելով իւր խօսքը, որ Հայու համար միմիայն ազգայնութեան կապ կրօնն է. մէկդի առ կրօնը, և ահա և ոչմի Հայ պիտի գտնես քիչ ժամանակի մէջ. ինչպէս գաղթականութիւնները մեղքորձը ցոյց տուած են:

Սոյն տեսութիւնը, որ մի քանի ազգայնոց մէջ եղած է, ինձ հաղորդելով բարեկամս և բանաւոր գտնելով զայն և խիստ արդարացի, արժան համարեցայ լրագրիս միջոցաւ հրատարակել և ընթերցողաց խորհրդածութեան նիւթ մտտաւարարել:

ՔԱՆԱԶԱՆ ԽԱՐԻԻ

Զմիռնիա, 20 Յունուար

Կայսերական վեհափառութիւնը որ ամենին առիթ չկորսուցնելու իւր հաւատարմակ անձնանուէր հպատակներն արժանաւորապէս վարձատրելոյ, հաճեցաւ այս անգամ վսեմ մահաբեր իշխան ի. Սպարթաքեանի Ա կարգի Բ աստիճանի պաշտօնը շնորհել և իւր եղբայր վսեմ Յովհաննէս Էփէնտիս Բ կարգի Բ աստիճանաւ պատուել ի փոխարէն իրենց արաւքոյ կարգի ծառայութեանը:

—Մեր վերջի թիւին յետոյ գաւառիս օգը ցրտացաւ ըստ բաւականին, բայց պարզութիւնը կըշարունակուի:

—Գողութիւններն երթալով աւելի համարձակութեամբ կըգործուին. կարծես թէ ձեռնահաս իշխանութեան մի կողմէ կըքաղաքէրուին: Հայ երիտասարդ մի Հայոց թաղի Բաղաշէնի փողոցն զիշերով անցած ժամանակ յանկարծ երկու յոյս վրան յարձակելով մէկը դաշտնը նորա կուրծքին կըգնէ և միւսն դանակը մի քանի տեղերը խօթելոյ միջոցին, երիտասարդը քովի ընկնելուն հանելով կրակ կուտայ, և գողները կըպարտաւորին որոք թողնուի խոյս տալոյ, ընդունած հարուածները անվնաս են: Գողութիւններն առաւելապէս Յունաց հիւանդանոցի փողոցին մէջ կըպատահին, ուրտեղ անցեալ օր մէկուն 6 լիւրան և 12 մէճիտը թալլեցին: Նոյն գողերը յետոյ հեղինակի մի խանութը կոխեցին և մինչդեռ կըսպառնային խանութպանին որ ստակ հանէ, յանկարծ զիշերապահը վրայ հասնելով մէկը միայն կըցնէ բռնել, որոյ քով կըգտնուէր բարեալգարար գողցուած կողոպտանքը: Դարձեալ Գալթի—օղու կոչուած փողոցը մէկու մի վերայ, արձակած ժամանակնին դիմադրութեան հանգիստելով դանակով աչքին կըզարնեն և քովի ժամացոյցն և 5 լիւրայն կ'առնուն:

—Էսիկ Պալք բազար ըսուած յուկոյն ստիկանութիւնը խոհարարի խանութ մի կոխելով հոն պատապարտող 3 գող, նոյնպէս և իրենց գողակից եղող խոհարարն, լրտեսուհի կին մի ձեռքակալութեամբ Զալթիէի զգաստարանը փոխադրուեցան:

—Դերձակի մի աշակերտ թիւին վերայ ձեռք մի նոր հագուստներ, որ հաղար գահեկանի արժողութիւն ունէր, քարափան կողմէն տիրոջ տուն տարած միջոցին, մի քանի գողեր լալելով աներևոյթ կ'ըլլան:

—Գեր. Ղևնդ վարդապետ փերզալէմեան վսեմ Սպարթաքեան Էփէնտի որոշմամբ և ազգային ժողովոյս հաճութեամբ հիւանդանոցի վերատեսուչ կարգեցաւ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Արի Շիֆթ—Պէյ, որ անցեալ ամառ Հայաստանի մէջ տեղի ունեցած հարստահարութիւնները զսպելոյ պաշտօնիւ յուղարկուած էր, և մի քանի արգարագործութիւններն լսելով մեք մեղի կ'ուրախանայինք ու կըզարմանայինք, հիւմակ կ'իմանամք որ պաշտօնանկ եղած է, և նորա պաշտօնը յանձնուել է յատուկ յանձնաժողովոյ մի, որոյ անդամ ընտրուած է Յակոբ Կոստանդնուպոլսոյ: Սոյն անձն, եթէ չեմք սխալիր, որ մեր քաղաքակիցն է, ընտրուած էր նաեւ անգամ հիւանդանոցի խնդրոյս համար հաստատուած յանձնաժողովոյս, փոխանակ Ապետին—Պէյի:

—Աստղաբանութեամբ մէջ անցեալ յոյնի մի քանիսն վերջերք ժանտախտ կոչուած փոխադրական ախտը յերեւան գալով, յանկարծ սկսած է մեծ կորուստներ ընել: Ժողովուրդը երբ կ'իմանան ժանտախտ լինելը կսկսին ցրուիլ հիւանդանոց տանելով ախտը. և հազիւ Դեկտեմբեր 10—22ին տեղութիւնը կ'իմանայ և միջոցներ ձեռք կ'առնու չտարածուելոյ համար: Վիւէթիլիանքս գիւղի 1700 բնակիչներէն և ոչ մի անձն ողջ մնացեր է. ուրիշ տեղուանք ալ շատ տուներ փակուել են. և գրեթէ 0/0 5 հոգի հազիւ կ'ապրին եղբւր բռնուողներէն: Սոյն տեղեկութիւններն որքան որ համառօտ են, այնքան ալ հզօր ու պերճախօս են: Յունուար 15 շին հասած հեռագիրը յիշեալ ցաւուն տկարանայր կըմանուցանէ:

—Պէտէրսան Պէյի երկու որդիքն հեազհետէ անձնատուր լինելով, ապստամբութիւնը վերջացած կըհամարի: Սոյն վախճանը կ'ունենայ անխոհեմութեամբ սկսուած ամեն ապստամբական փորձեր:

—Յիսուզի դեր. վանահայր Նիկողայոս Եղիւկոպոսի աղատութենէն մի քանի օր յետոյ միւս երկու աշխարհական ընկերքն ևս Մէհտէրհանէն ի Պատրիարքարան զրկուել են սրբազան Պատրիարք Հօր անդուլ ջանքով և Գաղղոյ վսեմ գեւազան Պ. Յուրիէի միջնորդութեամբ, որոց երկուսն ալ երախտագէտ պէտք է լինի մը ազգովին:

Յիշեալ գեսպանը կաղանդի օր անձամբ եկած է շնորհաւորել զսրբազան Պատրիարքն, և շատ յուսադրական խօսքերով վստահացուցած է զՆորին Սրբազնութիւնը Հայաստանի ապագայ վերանորոգութեան մասին և խառն մասնաժողովոյ մի ձեռք գործադրուելուն ըստ խոստման Մեծ—Եպարդոսին:

—Արարատեան ընկերութիւնը ի նպատակ իւր պարահանգէս տալոյ պատրաստուած էր ընդ պաշտպանութեամբ Գաղղոյ վսեմ գեսպան Պ. Յուրիէի, և սոյն պարահանգէսը ամսոյս 18ին եշ. երեկոյին կատարուած պէտք է լինի: Նոյնպէս և Գաղղոսէր Արեւելեան ընկերութիւնը ընդ հովանաւորութեամբ Անգղիոյ վսեմ գեսպան Սիր Հ. Լէյքտի պարահանգէս տալոյ կըպատրաստուէր ամսոյս 24ին ի նպատակ իշխել ընկերութեան:

—Գաղղոյ հասարակապետութեան նախագահ Մաք—Մահոն մարաշախտ կառավարական կուսակցութեանց ազդեցութեան դէմ չկարենալով դնել, իւր հրաժարագիրը տուել է, որոյ մէջ կըհաստատուէ իւր առ հայրենիքն ունեցած անձնանուիրութիւնը: Ազգային համաժողովը (ձերակոյտն և երես ժողովը) Պ. Կրէվին նախա-

գահ հրատարակեց եօթը տարուան համար, 563 ճայից մեծամասնութեամբ:

—Թէհրանէն կըլինի թէ Նոյ. և Դ. Կ. ամառ մէջ աթիւ փ անձրեւ եկած չէ, և խիստ կըվախցուի սովէն 1879 տարւոյն համար:

—Հելլենական նոր սահմանաց ուղղութեան դժեքը որոշելոյ համար կարգեալ յանձնաժողովը իւր նստերը պիտի սկսի եկող չորեքշաբթի:

ՎՐԻՊԱԿ

Լրագրիս վերջին թիւին հրատարակութիւնը խիժան օր պատահելուն, մի քանի վրիպակներ ու տառախալներ մնացած են մանաւանդ շրջափակ երեքին մէջ, զորոք ուշիմ ընթերցողք ինքնին կարող են ուղղել, մեք այսպիսի միայն ծանուցանել բաւական կը համարուիմք, որպէսզի հակառակորդաց առջև ազեղ տեղեր չիմարութիւնս:

ԱՌՆԻՏՐԱԿԱՆ

Արի. Անցեալ շաբթուան ծախսն է 29 կոշով, Էթէ 130 և Գարահիսար 125 գահեկանի: Այս շաբթուան ծախսն է 184 կոշով առանց տարբերութեան գնաց: Այսօրուան արժողութիւնն է Էթէ 130, Գարահիսարն 125, իսկ հասարակն 123—124 գահեկանի չէքին: Պատրաստի աղբանք կան 2739 կոշով:

ՍՈՍԻԵՏԵ

Société des quais de Smyrne

Կըլնդուի յարգոյ վաճառականներէ, որ եթէ ունին բոլոր Գարափանց ընկերութեան ծառայութեանը և կամ նաւահանգստի պաշտօնատան գործակալաց դէմ, իրենց բողոքն անմիջապէս Գարափանց ընկեր. մատուցանեն: Զմիւռնիա, 31 Յունուարի 1879:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԶԱՄԱՌՈՑ

ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԱՅ ԶԱՄԱՐ

Գրեց Հ. Գրիգոր Վ. Գրիգոր Միլի. Կրէն

Վիւէն Միլի. Կրէն 1879:

Ընտիր մատենագրութիւնն ու մարութիւն տպագրութիւն պարունակող հրատարակութիւնը, Վիւէնայի գրքոցին եղած է ու վրան հոծ գերմանականութիւնը յայտնապէս կ'երեւայ: Առաջիկայ Ընդհ. Պատմութիւնը, ինչպէս ճակոխէ կը տեսնենք, քիչաւ համառօտ է, բայց ամփոփ ու ջղուտ գրութեամբ, մեզն ամեն բան ճշկի կը պարունակէ միջեւ մեր օրերը. ու կատարեալ պատկեր մը կըլին անգլիական 1877—1878ի ճակատագրական պատերազմին:

Պարծիք մէկ մեծ առաւելութիւնն ան է, որ մեծ շրջանայեցութեամբ իր մեզն ամփոփած է Ազգային պատմութիւնը, Հայկական հարստութեան միջեւ Պերսիէի համաժողովը: Պարս ձգուած չէ ման. Հայոց մատենագրութիւնը: Ասոր մէջ կը ցուցնէ հայերէն լեզուին ամենամեծ զարգացումն ու գեղեցկութիւնը Արշակունցաց քաղաքութեան վերնալուստեան, զոր Ոսկեղար կ'անուանէ, ու ետքն անոր քիչ քիչ ինչալը միջեւ ժլ գոր' ուր նոր կեցողութիւնը կ'առնու լեզուն երկու նորածին դպրոցաց ձեռք:

Մատենագիրն իր փոքրիկ երկասիրութեան մէջ շատ որոշ գաղափար կուտայ մեզի, զանազան ազգայնապաշտական ու բարոյական կենաց վրայ: Կըցտենք հոս ամփոփ, բայց կատարեալ պատկեր մը Յունաց, Հռոմայեցոց, ինչպէս հաւե Պարսից, Եգիպտացոց ու ամեն նոր ազգաց զարգացման ու քաղաքակրթութեան ատիճանին վրայ:

Առաջիկայ ընդհ. Պատմութիւնը մէկ հատիկ գիրքն է ազգային վարժոցաց համար, քի իր համառօտ ճշտութեամբ, քի իր մարութիւնը և քի միանգամայն ամբողջ ու կատարեալ ըլլալուն:

Գիրն շատ աժան է, վաւեր 2 Ֆրանք է, և կըմարտնչի Վիւէնայի Միլիարեան գրականատանցն ուրիշ ամեն ազգային գրականաց քով:

Տէր Լրագրոյ,

Պ. Կրէն Գ. Պալտալէն:

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՆԱԳՍՈՅ ԱՐԽԱՏԵԱՆ